



ԵԱՀԿ Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ



Հայաստանի
ՔՀԿ-ների
Հակակոռուպցիոն
կոալիցիա



Ծրագիրը
ֆինանսավորվում է
Եվրոպական միության
կողմից

Ծրագիրը համաֆինանսավորվում
է
ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի
կողմից

Իրականացնող՝
Իրավաբանների հայկական
ասոցիացիա

Իրականացնող՝
Հայաստանի ՔՀԿ-
ների
հակակոռուպցիոն
կոալիցիա

Գործընկեր՝
Ինֆորմացիայի
ազատության
կենտրոն

«Ոստիկանության կողմից քաղաքացիներին ծառայություններ
մատուցելու ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում»

ԱՄՓՈՓՈՒՄ

Երևան,
2016թ

«Ոստիկանության կողմից քաղաքացիներին ծառայություններ
մատուցելու ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը»
հակակոռուպցիոն միջոցառում (Արարատ)

2016 թվականի հունիսի 15-ին Արարատում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հետ համատեղ, Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ իրականացվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության աջակցությամբ կազմակերպեց հակակոռուպցիոն միջոցառում «Ոստիկանության կողմից քաղաքացիներին ծառայություններ մատուցելու ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը» թեմայով: Միջոցառման նպատակն էր տվյալ ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերի վերհանումը և համապատասխան լուծումների առաջարկումն ու քննարկումը:

Հակակոռուպցիոն միջոցառմանը ելույթներով հանդես եկան ոլորտի առաջատար մասնագետ-փորձագետները՝ ներկայացնելով ոլորտում առկա խնդիրները և առաջարկելով համապատասխան լուծումներ:

Միջոցառմանը ներկա էին Արարատի մարզպետի տեղակալ **Իլիշ Շաղյանը**, ով նշեց, որ,- *«Կոռուպցիան չարիքի նման կախված է մեր հասարակության պարանոցից: Վերջին տարիներին ՀՀ-ում բոլոր տեսակի ծրագրերում իր ուրույն տեղն ունի կոռուպցիայի դեմ պայքարը: Մա մեր երկրի անվտանգության, պետականության բարեկամության հարցն է: Ես ուրախ եմ, որ այդ աշխատանքներին ակտիվ մասնակցություն են ունենում հասարակական կազմակերպության ներկայացուցիչները»:* Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև Արարատի քաղաքապետ Հայկ Հայկյանը, ով համոզմունք հայտնեց, որ նմանատիպ աշխատանքային քննարկումները բավականին մեծ արդյունք են տալիս, և ցանկություն հայտնեց, որ դրանք շատ լինեն, որպեսզի մարդիկ կարողանան ապրել իրավական երկրում:

Ողջույնի խոսքերին հաջորդեցին զեկույցներ ոստիկանության կողմից քաղաքացիներին ծառայություններ մատուցելու ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերի, դրանց հաղթահարման մարտահրավերների և այդ ոլորտում ՔՀԿ-ների հետ համագործակցության հնարավորությունների վերաբերյալ:

Հակակոռուպցիոն միջոցառման ընթացքում վեր հանված ոլորտային կոռուպցիոն ռիսկերի հիման վրա ներկայացվեցին և քննարկվեցին առկա խնդիրների հնարավոր լուծման տարբերակները, որոնք, ի մի բերվելով այս ամփոփման մեջ, իրենց հերթին կօգտագործվեն

վերոնշյալ ծրագրի շրջանակներում ուստիկանության ոլորտում բարեփոխումների իրականացմանը և առկա կոռուպցիոն ռիսկերի տեսանելի նվազեցմանը նպաստելուն:

Հակակոռուպցիոն միջոցառմանը զեկույցներով հանդես եկան՝ ՀՀ ուստիկանության «Ճանապարհային ուստիկանության» ծառայության պետի հաշվառման-քննական և տեխնիկական փորձաքննության գծով տեղակալ, ուստիկանության գնդապետ **Արթուր Տոնոյանը**, ՀՀ ուստիկանության անձնագրային և վիզաների վարչության իրավաբանական բաժանմունքի պետ, ուստիկանության փոխգնդապետ **Մարիամ Գևորգյանը**, ով ներկայացրեց զեկույց՝ ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների տրամադրման ոլորտում իրականացված բարեփոխումների և առաջիկա անելիքների վերաբերյալ, «Աքիլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության ՀԿ-ի նախագահ **Էդուարդ Հովհաննիսյանը**, ով ներկայացրեց զեկույց «ՀՀ Ճանապարհային ուստիկանության» ծառայության ոլորտում կոռուպցիայի հաղթահարման արդյունավետ մեխանիզմների կիրառման հնարավորությունների վերաբերյալ: Ջեկույցներով հանդես եկան նաև՝ «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի միջազգային փորձագետ՝ **Քարլ Ուլբրիխտը**, ով անդրադարձավ՝ «Ոստիկանության ոլորտում՝ քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով կոռուպցիայի հաղթահարման մարտահրավերները» թեմային, և «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» իրավախորհրդատու՝ **Արմինե Չախայանը**, ով ներկայացրեց՝ «Ոստիկանության ոլորտում քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով բարեփոխումների իրականացման նպատակով ՔՀԿ-ների հետ համագործակցության կարևորությունն ու հեռանկարները» թեման:

Խնդիրներ և առաջարկություններ

1. Սեկցիաներով լուսացույցների հետ կապված առկա են որոշ խնդիրներ, մասնավորապես՝ գիշերային ժամերին սեկցիան տեսանելի չի լինում վարորդների համար:

ՀՀ պետական իրավասու մարմինները խնդրի առկայությունը պատճառաբանում են նրանով, որ միջոցները չի բավարարում, իսկ հազարավոր վարորդներ տուգանվում են 20,000 դրամի չափով՝ այդ խնդրի առկայության պատճառով:

Առաջարկ 1. Ձեռք բերել կարմիր սլաքի սեկցիաներով LED լուսացույցներ, որոնց շնորհիվ կունենանք առավել անվտանգ երթևեկություն:

2. Միայն է կիրառվում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ ՎԻՎ) 124-րդ հոդվածի 14-րդ մասի պահանջը՝ միակողմանի ճանապարհով հոսքին

հակառակ ուղղությամբ վարելը՝ 5.000 դրամի փոխարեն, վարորդները տուգանվում են 20.000 դրամի չափով:

Առաջարկ 2. Անհրաժեշտ է վերանայել ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 14-րդ մասը: Մինչև Օրենքի փոփոխությունն ընդունելը T-աձև խաչմերուկներում վարչական պատասխանատվություն կիրառել 124-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:

3. Վարորդի ոչ սթափ վիճակի գննությունը «Շտապ բուժօգնություն» ՓԲԸ-ում իրականացվում է խախտումներով և չի տրվում վարորդին գննության արձանագրության երկրորդ օրինակը:

Առաջարկ 3. Վարորդի սթափության վիճակի գննության արձանագրության մեջ անհրաժեշտ է ավելացնել համապատասխան նշումներ, որտեղ ներառված կլինեն վարորդի ստորագրությամբ մեզի և (կամ) արյան հետազոտության միջոցով գննություն իրականացնելը, ինչպես նաև վարորդներին տրամադրել ոչ սթափ վիճակում գննության արձանագրության երկրորդ օրինակը:

4. Ինչպես գիտենք, մայթեզրերին կայանելու համար նախատեսված է տուգանք 20,000 ՀՀ դրամի չափով: Հակակոռուպցիոն միջոցառման մասնակիցները հարց բարձրացրեցին, այն մասին, թե վարչական պատասխանատվության ենթարկելու դեպքում ի՞նչ տուգանք է նախատեսվում քաղաքապետարանի նկատմամբ այն բոլոր դեպքերում, երբ նա մայթերին, խաչմերուկների տարածքում՝ բենզալցակայաններ, անօրինական շինություններ կառուցելու թույլտվություն է տալիս:

Առաջարկ 4. Ուսումնասիրել մայթեզրերում քաղաքապետարանի կողմից շինարարական թույլտվության օրինականությունը և ենթարկել համապատասխան վարչական պատասխանատվության:

5. Կատարելով վիճակագրական վերլուծություն, ստացվում է հետևյալ պատկերը. 2015 թվականին 2014 թվականի համեմատ ՃՏՊ – ների հետևանքով զոհերի թիվը կազմել է 346 և աճել է 49-ով (16.5%), որից՝

- 147 արագության գերազանցում - 49.3%,
- 124 վրաերթ - 41,6%,
- 1 494 154 արագաչափերով և տեսախցիկներով ընդանուր կայացված որոշումներ,
- 547 427 արագության գերազանցում արագաչափերով - 36.6%:

Հարց է առաջանում. արդյո՞ք առկա է ճանապարհային ոստիկանության կողմից կատարված որևէ վերլուծություն՝ արագաչափերի քանակի ավելացման և արագության պատճառով զոհերի աճի պատճառների և փոխկապակցվածության վերաբերյալ:

Առաջարկ 5. Վերացնել արագաչափերի նախագրուշացնող ցուցանակները: Դրա փոխարեն առաջարկվում է ճանապարհների սկզբում տեղադրել մեծ նշաններ՝ «Ճանապարհը հսկվում է արագաչափով» գրառումով: Հակակոռուպցիոն միջոցառման մասնակիցների կարծիքով տվյալ առաջարկը կնվազեցնի թե՛ գոհերի, թե՛ իրավախախտումների թիվը:

6. Անհրաժեշտ է բարձրացնել տվյալ ոլորտում հասարակության իրազեկվածության մակարդակը:

Առաջարկ 6. Հասարակության իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով առաջարկվեց՝ դպրոցներում կրթական ծրագրեր իրականացնել, որպեսզի հենց դպրոցական տարիներից հասարակության անդամները ծանոթանան ոստիկանության գործառույթներին և տեղեկանան կոռուպցիայի վնասակարության մասին:

7. Անհրաժեշտ է տվյալ ոլորտում ապահովել ծառայողական քննությունների հրապարակայնությունը և ոստիկանութնա ծառայողների կողմից թույլ տրված իրավախախտումների բնույթը: Ոստիկանության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի ամփոփում

Առաջարկ 7. Ծառայողական քննությունների հրապարակայնության ապահովման նպատակով առաջարկվում է ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքում հրապարակել ոստիկանության ծառայողների կողմից կատարված իրավախախտումների դեպքերով կատարված ծառայողական քննության արդյունքները՝ ներկայացնելով նաև վերջիններիս կողմից թույլ տրված իրավախախտումների բնույթը:

8. Կան շահառուներ, ովքեր անկողնային հիվանդ են և չեն կարող ձեռք բերել անձնագիր, իսկ կայանները որոնք սպասարկում են նման խմբերի պատկանող անձանց չեն բավականեցնում, օրինակ՝ մի քանի մարգում կարող է տեղակայված լինել ընդամենը 1 կայան, որը չի հասցնում սպասարկել բոլոր շահառուներին:

Առաջարկ 8. Մարզերում մեծացնել անձնագրային և վիզաների սպասարկման կայանների քանակը մարզային բնակչության կարիքները նշված ծառայությունների ոլորտում ամբողջությամբ բավարարելու նպատակով:

9. Թեժ գծերը երբեմն այդքան էլ հասանելի չեն գործում քաղաքացիների համար:

Առաջարկ 9. Վերահսկողություն իրականացնել նրանց նկատմամբ՝ սպասարկման որակի բարելավման նկատառումներից ելնելով:

10. Խնդիրներ, որոնք կապված են ոստիկանության ծառայողների, և առավելապես, ճանապարհային ոստիկանների կողմից օրենքները և այլ ենթաօրենսդրական ակտերը կիրառելու հետ:

Առաջարկ 10. Ոստիկանության ծառայողների, և առավելապես, ճանապարհային ոստիկանության ծառայողների համար պարբերաբար անցկացնել վերապատրաստումներ և իրազեկման սեմինարներ, ինչպես նաև ներդնել վերջիններիս գործունեության նկատմամբ պատշաճ վերահսկողության մեխանիզմներ: Որպես վերահսկողության մեխանիզմ կարող են դիտվել հասարակական մոնիթորինգների իրականացումը, ինչպես նաև ներդնել ոստիկանության կողմից քաղաքացիների հետ հարաբերություններում վարքագծի ստուգման և քաղաքացիներին մատուցվող ծառայությունների հետազոտությունների (Service delivery surveys) իրականացման հնարավորություն: Հետազոտության միջոցով անկախ վերլուծություն իրականացնող ընկերությունը/կազմակերպությունը կիրականացնի քաղաքացիների և հասարակության հետազոտություններ, պարզելու հասարակությանը մատուցվող ծառայությունների որակը, բարեփոխումների իրականացման ընթացքը, հասարակությանը ոչ պատշաճ որակի ծառայություններ մատուցելու պատճառները և համակարգում առկա այլ խնդիրներ:

Ընդ որում, ենթադրվում է, որ պատշաճ վերահսկողության մեխանիզմների կիրառման արդյունքներում զուգահեռ կկիրառվեն նաև համապատասխան կարգապահական միջոցներ:

11. Երկար ժամանակ չլուծվող և մտահոգիչ խնդիրներից է նաև ոստիկանության բաժիններում հանցագործության մասին հաղորդումներ վերցնելու արատավոր պրակտիկան: Օրինակ, ինչպես հայտնում են մասնակիցները, այն դեպքում, երբ անձը հաղորդում ներկայացնելու նպատակով ներկայանում է Ոստիկանության հերթապահ բաժին, նրան ուղղորդում են հետաքննության բաժնի պետի մոտ: Վերջինս զրուցում է անձի հետ և եթե նկատվում է, որ հանցագործությունը դժվար բացահայտվող է, փորձում են հորդորել անձին չներկայացնել հաղորդում: Իհարկե, նշված խնդիրը օրենսդրական նորմի չկիրառման հետևանք է:

Առաջարկ 11.

Ոստիկանության ծառայողների համար պարբերաբար անցկացնել վերապատրաստումներ և իրազեկման սեմինարներ, ինչպես նաև ներդնել վերջիններիս գործունեության նկատմամբ պատշաճ վերահսկողության մեխանիզմներ, որոնք ներկայացված են սույն փաստաթղթի **Առաջարկ 10-ի** շրջանակներում:

Ընդ որում, ենթադրվում է, որ պատշաճ վերահսկողության մեխանիզմների կիրառման արդյունքներում զուգահեռ կկիրառվեն նաև համապատասխան կարգապահական միջոցներ: